ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան 1փող.թիվ 2,
Հեռ. (094) 519030 , hatsavan.kotayk@mta.gov.am

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՈՍՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

N 114
10 մայիս 2019թ.

Հարգելի պարոն մարզպետ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Հացավան համայնքի ղեկավարի 2019թվականի մայիսի 02-ի թիվ 27-Ա և մայիսի 06-ի թիվ 28-Ա որոշումները:
Առդիր՝ 2 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Խաչատրյան
Հեռ./093-212366/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 27-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016թվականի ապրիլի 14-ի N 17-Ն որոշումը՝

որոշում եմ

1. Հացավան համայնքի 2019թվականի սուբվենցիայի ծրագրի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:
2. Հաստատել Հացավան համայնքի 2019թվականի սուբվենցիայի ծրագրի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը *համաձայն հավելվածի:*
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Անի Կարապետյանին համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում տեղադրել Հացավան համայնքի մշակույթի տան հիմնանորոգման վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումներին հրավերը,ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում՝ այն վայրերում,որոնք մատչելի են համայնքի բնակիչներին առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:
4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Անի Կարապետյանի վրա:
5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Ալվարդ Խաչատրյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

2019թ. մայիսի 02
գ.Հացավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 28-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝

որոշում եմ

1. 2019թվականի մայիսի 08-ին ժամը 11^{00}-ին հրավիրել ավագանու արտահերթ նիստ՝հետևյալ օրակարգով.
   1) Հայաստանի Հանրապետության 2019թվականի պետական բյուջեով սուբվենցիաների ստացման նպատակով նախատեսված ծրագրին համաձայնություն տալու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

2019թ. մայիսի 06
գ.Հացավան